ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 41

«25» 04 2018 թ. գ. Երևան

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԿՆԻՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 3-րդ մասին պահանջի կատարումն ապահովելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել դատախազներին կնիքներ տրամադրելու կարգը՝ համաձայն հավելված N 1-ի (կցվում է):

2. Հաստատել գլխավոր դատախազությունում գրանցված և համարակալված կնիքների ձևերը՝ համաձայն հավելված N 2-ի (կցվում է):

3. Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին՝ մինչև 2018 թվականի հուլիսի 25-ն ապահովել կնիքների տրամադրումը դատախազներին:

4. Սույն հրամանի կատարման վերահսկողությունը վերցնում եմ ինձ վրա:

5. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին և ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին և ավագ դատախազին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին և Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 25-ի
N 41 հրամանի

ԿԱՐԳ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻՆ ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է դատախազներին կնիքներ տրամադրելու կարգը:

2. Դատախազներին տրամադրված կնիքներն օգտագործվում են պաշտոնական փաստաթղթերը և այլ առարկաները կնքելու համար:

3. Անձնական կամ այլ նպատակներով կնիքներն օգտագործելը, այլ անձանց փոխանցելը կամ կորցնելը կարող է առաջացնել կարգապահական պատասխանատվություն:

4. Դատախազը պարտավոր է պահպանել իրեն հատկացված կնիքը, պաշտպանել դրանք վնասումից և ոչնչացումից:

5. Կնիքների պատվիրումը և դրանք դատախազներին տրամադրումն ապահովում է Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարը (այսուհետ՝ գլխավոր քարտուղար):

II. ԿՆԻՔՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կնիքը ռետինե է, շրջանաձև, տրամագիծը՝ 44 միլիմետր, շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ» գրառումը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, շրջանագծի ներսում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերը, կենտրոնում՝ կնիքի հերթական համարը:

7. Մյուս դատախազների կնիքը ռետինե է, շրջանաձև, տրամագիծը՝ 44 միլիմետր, շրջանագծի երկայնքով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ» գրառումը՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն, շրջանագծի ներսում՝ Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերը, կենտրոնում՝ կնիքի հերթական համարը:

8. Կնիքի վրա պատկերված Հայաստանի Հանրապետության դատախազության խորհրդանիշի պատկերը պետք է համապատասխանի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված նկարագրությանը:

9. Կնիքները համարակալվում են եռանիշ թվերով, աճողական կարգով:

III. ԿՆԻՔՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

10. Դատախազին կնիքը տրամադրում է Հայաստանի Հանրապետության դատախազության առաջին բաժինը (այսուհետ՝ առաջին բաժին):

11. Կնիքները պատվիրվում և դատախազին է հանձնվում դատախազ նշանակելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում:

12. Առաջին բաժինը վարում է «Դատախազներին տրամադրվող գրանցված և համարակալված կնիքների հաշվառման» մատյան (Ձև 1): Կնիքը դատախազին տրամադրվում է նշված մատյանում հանձնողի և ընդունողի ստորագրությամբ, համապատասխան կնիքով վավերացմամբ: Մատյանում նշվում է նաև կնիքի տրամադրման ամիսը և ամսաթիվը: Նույն կարգով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին է տրամադրվում նաև Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կնիքը:

13. Կնիքը վնասվելու կամ օգտագործման համար ոչ պիտանի դառնալու դեպքերում դատախազը զեկուցագրով այդ մասին տեղեկացնում է վերադասին: Վերադասը գլխավոր քարտուղարի միջոցով կնիքը վերադարձնում է առաջին բաժին՝ նորը տրամադրելու համար: Կնիքները ոչնչացվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ գլխավոր քարտուղարի հրամանով ստեղծված հանձնաժողովի եզրակացությամբ (Ձև 2):

14. Կնիքի կորելու կամ հափշտակելու վերաբերյալ դատախազն այդ մասին անհապաղ զեկուցագրով տեղեկացնում է վերադասին և հայտարարություն տալիս Հայաստանի Հանրապետության ոստիկանությունում:

15. Սույն կարգի 13-րդ և 14-րդ կետերում նշված դեպքերում նոր կնիք տրամադրվում է կնիքը կորելու, վնասման կամ հափշտակության հանգամանքները պարզելուց հետո՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում: Կորցրած կամ հափշտակված կնիքը համարվում է անվավեր գլխավոր քարտուղարի հրամանով: Անվավեր համարելու մասին տրվում է հրապարակային հաղորդագրություն կամ տեղեկություն՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

16. Դատախազի լիազորությունները դադարելու կամ դատախազությունում այլ պաշտոնի նշանակվելու դեպքում, դատախազը պարտավոր է համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելուց հետո՝ անհապաղ, կամ դրա անհնարինության դեպքում՝ հաջորդ աշխատանքային օրը կնիքը հանձնել առաջին բաժին:

Ձև 1

Մ Ա Տ Յ Ա Ն

Դատախազներին տրամադրվող գրանցված և համարակալված կնիքների հաշվառման

Հ/Հ	Կնիքի համարը	Ում է տրամադրվել Ա.Ա.Հ.	Պաշտոնը	Ստացողի ստորագրությունը	Հանձնողի ստորագրությունը	Տրամադրման ամիսը, ամսաթիվը	Նշումներ ոչնչացման մասին

Ձև 2

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ Ն_____

Հանձնաժողովը որոշեց _____
(նշել դատախազի Ա.Ա.Հ., պաշտոնը)

_____

_____ին

Հատկացված _____
(նշել կնիքի տեսակը և համարը)

ճանաչել անվավեր և հանձնել ոչնչացնել

_____
(նշել ոչնչացման հիմքերը)

ոչնչացվող կնիքի դրոշմը

Հանձնաժողովի նախագահ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

Հանձնաժողովի անդամներ՝

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

_____ (ստորագրություն) _____ (անուն, ազգանուն)

«___» _____ 20 թ.

ՀԱՎԵԼՎԱԾ N 2
Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2018 թվականի ապրիլի 25-ի
N 41 հրամանի

Ձև 1

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի ռետինե կնիքի նմուշը

Ձև 2

Հայաստանի Հանրապետության դատախազության ռետինե կնիքի նմուշը